

Ա. ԲԵՐԳԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

ԱՐՄԱՆԻԱՆ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937



9(38)

Բ-55

9(38)

Ա. ԲԵՐԳԵՐ

11000

355.48 [Մակերդույն]

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

(Ոժանդակ նյութեր հեռակայողներին)

Հ/Հ  
67379





Խմբագիր Ա ԴԱԲՐԻԵԼՑԱՆ

Թարգմ. Նիկ. Տեր-ՄԱՆՎԵԼՑԱՆ

Սբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հանձնված և արտադրության 1 ապրիլի 1937 թ.

Ստորագրված և տպելու 5 ապրիլի 1937 թ.

Ուղուցիչների գորակավորման ինստիտուտի տպարան,  
Յերևան, Մաբքսի փողոց 17

19368

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՅԻ

1.

Ալեքսանդր Մակեդոնացու պատկերը, վորպես պատմական մեծ անձնավորության պատկեր, խորապես մեխվել և յերկրիս շատ և շատ ժողովուրդների հիշողության մեջ։ Մակեդոնական հոչակավոր գորավարը բաղմաթիվ անդամ պատկերացված և պատմական և գեղարվեստական գրականության մեջ։ Նրա մասին յեղած պատմվածքները բավականաչափ տեղ են գրավել և այժմ ել շարունակում են գրավել Յեվրոպայի, Ասիայի և նույնիսկ Աֆրիկայի ժողովրդական մասանների ստեղծագործության մեջ։

Վերն և Ալեքսանդր Մակեդոնացու, վորպես պատմական գործչի և զորավարի, այդ ահազին ժողովրդականության պատճառը, մի ժողովրդականություն, վոր շարունակվում և յերկու հաղարամյակ։

Այդ պատճառը նշել ե դեռևս Մարքսը, ասելով. «Հունաստանի ներքին բարձրագույն ծաղկումը կապված է Պերիկլեսի դարաշրջանի հետ, իսկ արտաքին բարձրագույն ծաղկումը՝ Ալեքսանդրի դարաշրջանի հետ»։

Գերմանացի բուրժուական խոշոր պատմաբան, «ուժեղ անձնավորության» գաղափարախոս Դրոյդենը չափազանց իդեալականացնում և Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա գործունեյությունը, այդ գործունեյությունը համարելով նոր գարաշրջանի «հելլենականության» յերևան գալու պատճառ։

Մեր խնդիրն այն է, վոր հասկանանք Ալեքսանդր Մակեդոնացու անձնավորությունն ու զործունեյությունը Հունաստանի և Առաջավոր Արևելքի յերկրների սոցիալական-տնտեսական հարաբերությունների մեջ տեղի ունեցած այն փոփոխությունների կապակցությամբ, վորոնք ել պայմանավորել են նոր զարգացման մեջ։

Հին Մակեդոնիան մի լեռնուտ յերկիր է, վոր հյուսիսարևե  
մուտքից հարում և Եղեյան ծովին,—Թերմեյան ծովածոցին, ինչ-  
պես կոչվում եր նա հնում,—և սահմանակից և հարավ արևմուտ-  
քից Թեսալիային, իսկ հյուսիս-արևելքից՝ թրակական-իլիրիա-  
կան ցեղերին: Մակեդոնիայի լեռներն ու հովիտները լիակատար  
հնարավորաթյուն ելին տալիս բնակչությանը (վորն ազգակից  
եր հույներին) լայնորեն պարապելու անասնապահությամբ և  
հողագործությամբ: Այն ժամանակ (մեր թվականից հինգ դար  
առաջ) Մակեդոնիայի բնակչությունը գեռևս պահպանել ելին կյան-  
քի հին, նահատպետական կենածեր, վոր շատ կողմերով հիշեց-  
նում եր Հոմերոսի ժամանակները: Առևտուրը, քաղաքային կյան-  
քը և ստրկատիրությունը Մակեդոնիայում շատ թույլ ելին զար-  
դացած: Այդ պատճառով ել նա մնացած Հունաստանի համեմա-  
տությամբ հանգիստանում եր հետամնաց յերկիր:

Մակեդոնական ցեղերի խումբը խոշոր և այն զարաքշանի  
համար ուժեղ պետություն գարձնելու պայքարը, վոր սկսվել եր  
մեր թվականից հինգ դար առաջ, վերջացել եր Ալեքսանդրի հոր՝  
Փիլիպոս 2-ի ժամանակ: Փիլիպոս 2-ը (360—336 թ. թ.  
մինչեւ մեր թվականը) ստեղծեց հին ցեղական անկանոն բանակի  
փոխարին միանական կենարոնացրած մի բանակ և գոցրեց  
նրա մեջ հունական սաղմական տեխնիկայի բոլոր նվաճումները:  
Այսպիսով առաջ յեկավ սաղմական կազմի նոր, մակեդոնական  
տեխնիկան—նշանավոր ֆալանգաները՝ զեղակազմ հետեւակ միա-  
վորները, վորոնցից յուրաքանչյուրի մեջ կար մոտ 11 հազար  
մարդ, զինված նոր տեսակի զենքով, ուստի սներով (մինչեւ  
6 մետր յերկարություն ունեցող ահազին նիզակներով): Մակե-  
դոնական զորքի մեջ ել ավելի լարեր զեր և խաղացել բարձա-  
թիվ և հիանալի զինված հեծելազորը: Մակեդոնացիներն ի բնե  
հեծյալներ ելին, այդ վերաբերում և մահավանդ նրանց ունեօր խա-  
վերին և ավագանուն: Մակեդոնիայում տեղադրվել եր զեռևս վոչ մի  
տեղ զոյսություն չունեցած ծանրապեն մարտիկների հեծյալ կազմ;  
վորը մեծ զերազառություն եր տալիս մակեդոնական հեծելազո-  
րին հին աշխարհի մյուս յերկըների զորքերի համեմատու-  
թյամբ \*):

\*). Հին Մակեդոնիայի սաղմական տեխնիկայի մասին տես Յ. Ենգելիք  
«Բանակ» խորագրավ հոդվածը: Յերկերի ժողովածու հատ. 11-րդ, 2-րդ մասը:

Բոլոր այդ բարեկոխությունների հետևանքով Փիլիպպոս 2-րդը աեր դարձավ ցամաքային ուղմական մեծ ուժերի (Նավասարծ նա ունեցավ իր թագավորության վիրջում) և այդ ուժերը դարձան Հունաստանի քաղաքական կյանքի վճռող զործոնները:

Փիլիպպոս 2-րդը հետղնետե յենթարկում և իր քաղաքական կոնստրուկտուրային թեսալիան, իսկ միջին Հունաստանը, զոր այն ժամանակվա քաղաքական և կուլտուրական կյանքի կենտրոնն եր, կանգնում և իր անկախությունը կորցնելու սպառնալիքի տուած: Շուտով Փիլիպպոսը զրավում է Եգիշյան ծովի հյուսիսային ափերին գտնվող յերկրները, զրանց հետ միասին նաև հունական, քաղկեդական և թրակիական ծովափնյա առևտրական քաղաքները, վորոնք կարեռագում հենակյաններ ելին հանդիպանում հունական, գլխավորագես Աթենքի ծովային առետրի համար: Այդ քաղաքների զրավումը Փիլիպպոս 2-րդի կողմից տուած բերեց մի յերկարատե պատերազմ, զորի մեջ նրա զուրու եր յեկել Միջին Հունաստանի պոլիսների մի խումբ՝ Աթենքի զիմավորությամբ:

Այդ պայքարի հյությունը, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացու գործունեյությունը ճշգրտորեն հասկանալու համար անհրաժեշտ և լուսաբանել հին ժամանակի յերկու ուրիշ «համաշխարհային» ուժերի՝ Հունաստանի և Պարսկաստանի սոցիալական-տնտեսական զրությունը:

Հունաստանը մեր թվականից առաջ 4-րդ դարի յերկրորդ կիսում վերտպրում եր խոր սոցիալական-տնտեսական ճգնաժամ: Պոլիսներում կողմվել ելին սարկածիրական հասարակության աղքաղասակարգայնացած տարրերի աշքի ընկնող մասսաներ, չքավորներ, վորոնք հաճախ վորչինչ չունելին, բացի ազատ քաղաքացու կոչումից: Պակասել եր ազատ հողագործ բնակչությունը, զորին զուրու եր մղել սարկական աշխատանք զործագրող զարգացած խոշոր հողատիրությունը: Ուժեղորեն աճել եր առևտրական-վաշխառուական կոտիտալ սարկատիրական հիմունքով: Պոլիսներում կազմվել եր զրամատիրական (պլուտոկրատիա) վերնախավ, զորի շահերը հատու կերպով արքերվում ելին ապագասակարգայնացած մասսայի շահերից: Դրա հետեւանքով հունա-

կան քաղաքներում ծավալից գասակարգային սուր պայքար, փորբ հաճախ ընդունում եր հեղափոխական ըսնկութիւնի բնույթ:

Այսպիսով Հունաստանում անտիկ ստրկատիրական հասարակությունը հասավ անկման, վորի արտահայտությունն եր հունական հասարակության քաղաքական կազմակերպության թուլացումը: Արդեն գոյություն չուներ Աթենքի ծովալին պետությունը, վորը գրավել եր Միջերկրական ծովի արևելյան մասի հունական պոլիսների ընդարձակ յերկրը: Սպարտայի ռազմական ուժն անհայտացել եր, չկային այլև Հունաստանում քիչ թի շատ կայուն քաղաքական միավորություններ:

Սակայն ապագաստիկարգայնացած քաղաքացիական մասսան տիրում եր ռազմական բարձր տեխնիկային, վորը նա ծախում եր նրան, ով ավելի յեր վճարում: Հունական վարձու զորքերը ծառայում եյին և պարսիկ թագավորին, և նրա գեմ ապստամբած կուսականերին, և Միջերկրական ծովի լայնածավալ յերկրի ամեն տեսակի այլ իշխողներին:

Հունական ռազմիկների հետ միասին ասիստական յերկրներն եյին մտնում նաև հունական ապրանքները: Ավելի և ավելի յեր զարգանում առևտուրը Փոքր Ասիայի ներքին մասի, Ասորիքի, Միջագետքի, Իրանի և Նույնիսկ Միջին Ասիայի հետ: Առևտուրական ճանապարհները տարածվում եյին հեռու արևելք, պարսկական պետության խորքը:

Պարսկական պետությունն այդ ժամանակ քաղաքական քայլայման պատկերն եր ներկայացնում: Աքեմենիդների թագավորական իշխանությունը հենվում եր սոցիալական-տնտեսական տեսակետից հետամնաց պարսկական ցեղերի և, ամենից առաջ, նրանց տոհմական ազնվականության վրա: Հենվում իր նա նշանավոր չափով նաև հունական վարձկաների վրա: Պարսկական լծի ծանրության տակ տառապող բազմաթիվ ստրկացված ժողովուրդները ձգտում եյին ազատվել այդ իշխանությունից: Յեզիրապոսում, Միջագետքում, Փոքր Ասիայում, վորոնք այդ ժամանակ գրավված եյին պարսկաների կողմից, տեղի եյին ունենում հուզմունքներ, վորոնք առանձին բննշումներով հայտարարում եյին իրենց մասին: Բայց հենց պարսկական ազնվականության մեջն ել կատարվում եր քայլայման պրոցեսում: Այդ

մասին վկայում են պալատական սպանություններն ու հեղաշըր-  
ջումները, վորոնք բավական հաճախ ելին աեղի ունենում այդ  
շրջանում: Այսպիսով 4-րդ դարի յերկրորդ կիսի պարսկական  
պետությունը պետական կազմակերպության կայունության տե-  
սակիտից ներկայացնում եր ինքնին «կոմի վոաներ ունեցող  
հսկային»:

Պարսկական թագավորների կողոպտած ահապին հարստու-  
թյունները չափազանց գրավում ելին հույններին և բորբոքում  
ելին նրանց յերեակայությունը: Ստեղծվում է մի ամրող թեո-  
րիա, վորն առաջ և քաշում բրոր հույնների քաղաքական միաց-  
ման անհրաժեշտությունը՝ միտհամուռ, կերպով արշավելու Պարս-  
կաստանի վրա՝ նրա առասպելական հարստությունները դափթե-  
լու և «բարբարոսներին» հունական տիրապետությանը հպատա-  
կեցնելու նպատակով: Դրա մեջ տեսնում ելին վոչ միայն ստըր-  
կատիրական հարաբերությունների ձգնաժամից գուրս դալու  
յելք, այլև Աթենքի պետության անցյալ փայլի վերածնու-  
թյունը՝ չտեսնված՝ չափելով: Դա «պանհելլենական գաղափարի»  
ուղղություններից մեկն և, վորը հունական աշխարհի ապագա  
քաղաքական վերածնան կենտրոն եր դարձնում Աթենքը և  
արտացոլում եր դեմոկրատական մասսաների իդեոլոգիան, վո-  
րոնք յերազում ելին հարստանալ և վերականգնել ամբողջու-  
թյամբ սորկատիրական դեմոկրատիայի քաղաքական հարաբե-  
րությունները:

Մի ուրիշ ուղղություն յեխում եր պլուտոկրատիական  
վերնախավից, վորը ձգուում եր հենակետ գանել ապագասակար-  
դայնացած մասսայի յերւյթների գեմ մակեդոնական թագավորի  
նոր ձևակերպված ուժնդ ուղմական իշխանության մեջ, վորը  
պետք և զավթեր Պարսկաստանը և նրա հարստությունները  
գլուխ կանգնած հույն-մակեդոնական զորքերին, միացնելով իր  
իշխանության ներքո ամրող Հունաստանը:

Ընդհակառակն, առաջին ուղղությունը տեսնում եր մակեդո-  
նական թագավորի մեջ զեղի ինքը թշնամական, հակատեմոկրա-  
տական ուժ, և նրա առաջնորդները կազմակերպում ելին յե-  
ռանդուն զիմազրություն մակեդոնական թագավորի վոալն-  
ձգությունների դեմ: Դեմոկրատիայի առաջ քաշած առաջնորդ-  
ների մեջ ամենից նշանավորն եր հոչակավոր հոետոր Դեմոսթե-

նեսը։ Հակամակենդոնական խմբակցությանն եր հարում նաև Սպարտան՝ Պելոպոնեսի միացած պետությունների մեծամասնության հետ միասին։

Փիլիպոս 2-րդի համարյա քսանամյա պայքարի շրջանում տեղի ունեցած անցքերից Հունաստանի հակամակենդոնական խմբակցության դեմ հարկավոր և նշել Խերոնի մոտ կատարված նշանավոր ճակատամարտը (338 թվին մեր թվականից առաջ), վորտեղ Փիլիպոս 2-րդը հաղթեց հակամակենդոնական կողմիցիային։

Սակայն այդ հաղթությունն Աթենքը և Մակեդոնիային թշնամի միացած Հունաստանը չդարձեց նվաճած յերկրներ։ Փիլիպոսն ստիպված եր հետագայում հարգել Աթենքի կարծիքը, քանի վոր ծովը խոշոր չափով շարունակում եր մոտ Աթենքի իշխանության ներքո։ Փիլիպոսը և մանավանդ նրա հոչակավոր վորդին և հաջորդը՝ Ալեքսանդրը կարողացան գլուխ բերել Արևելքի նվաճումը, միայն զգալի չափով հենվելով Բալկանյան թերակղու բոլոր ժողովուրդների ուազմական միջոցների և քաղաքական տրադիցիաների վրա։

## 2.

356 Թվին, նախքան մեր թվականը, Փիլիպոս 2-րդի կինը՝ Եպիրոսի իշխանունի Վոլիմալիան ծննց Ալեքսանդր վրա-դուն։

Դեռևս մանուկ հասակում նա իր խոսքերով և արարքներով հայտարերել եր իր արտասովոր անձնավորության գծերը։ Ալեքսանդրն ստացել ե իր ժամանակի համար փոյլուն գաստիարակություն։ Նրա կրթությունը բոլորել ե հին ժամանակի մեծագույն դիտչականներից մեկը—Արիստոտելը, վորը յերիտասարդ իշխանի հետ, վորպես նրա գաստիարակը, ապրել ե մոտ յերեք տարի՝ նրանց համար հասուն շինված։ Հքեղ պուրակով-շրջապատված պալատում։ Բայց Ալեքսանդրը մոտ չել Արիստոտելի հետ, թեև շատ բան է սովորել իր մեծ ռատուցչեր։ Պատանեկության հասակում Ալեքսանդրը հաջուակվում եր Հռեմերով պոհծերի շրջապատված հերոսությամբ և մեծ արհամարհանդությամբ։ Եր վերաբերյալ ավագ աւուն քառասուն է Ըստ ակամաբակցությունը պահպանող մարդկանց։

Ալեքսանդրն անհամեմատ ավելի ժոտերը, քան հորը, փորի հետ նա մի քանի անգամ ունեցել և այնպիսի խոշոր ընդհարութմանը, վոր ժամանակին պտտող լուրերը նրան մասնակից եյին համարում իր հոր սպանության գործում: Հայտնի յե, վոր Ալեքսանդրը յենթակա յեր բուռն զայրույթի բռնկումների, վոր յերեմի փոխվում եր հիստերիայի: Պատմաբանները նշել են նաև նրա սննդափ կրոնամոլությունը, սերը գեղի պողան և գերասանականությունը: Հոչակավոր զորավարի ֆիզիկական արտաքինը չեր համապատասխանում նրա փառքին: Ալեքսանդրը թույլ կազմվածքի տեր, հիվանդում մարդ եր, իսկ նրա առանց այդ ել թույլ առողջությունը սիստեմատիկորեն քայլայվում եր առազուապ շվայտանքներով, վորոնք առանձնապես հոճախ եյին լինում, յերբ նու Արևելքումն եր գանվում:

Դեռևս իր հոր կենդանության ժամանակ Ալեքսանդրը կարսողացել եր հայտարերել իր սողմական և վարչական ձիրքերը. նա ճնշել եր թրակիական ցեղերի ապատամբությունը և, լինելով հեծելազորի հրամանատարը, վճուական գեր եր կատարել Խերոնի մոտ յեղած ճակատամարտում:

Փիլիպոս Հ-րդի մահն ապդանշան դարձավ Հունաստանում հակամակեղոնական շարժման ծավալմանը, մասնավանդ վոր միաժամանակ ապստամբել եյին թրակիական ցեղերը: Դեմոսթենեսը հաջողությամբ կոչ եր անում պատերազմելու Մակեդոնիայի դեմ: Շարժման կենտրոն գարձել եյին Թերեն և Բեռլիան:

Բայց Ալեքսանդրը կատարելով բացառիկ արագ չվերթ՝ ապստամբների համար անսպասելի կերպով յերեաց Բեռլիան յում և ջարդեց նրանց զորքը: Թերեն վերցվեց և ավերվեց: Երանց բնակչության նշանակալից մասը ծախվեց վորպիս գերիներ: Մեծ քանակությամբ մարդիկ կոտորվեցին քաղաքը վերցնելու ժամանակի: Մակայն Աթենքի վերաբերմամբ Ալեքսանդրը ցույց տվեց հարդաբից զարգածություն: Նա Աթենքի հետ կապեց պայման, ըստ վորի վոչ միայն պահապանվում եյին գոյություն ունեցող հարաբերությունները: այլև Աթենքի տրամադրության տակ եր անգնուած Բեռլիային սահմանակից կարևոր Վորոպի ամրությունը: Հակամակեղոնական շարժման առաջնորդների անվտանգությունն ապահովվում եր լիովին: Այսպիսով Ալեքսանդրն ընդունում եր համերաշխությունը դեմոկրատական հունաստանի հետ:

334 թվի գարնանն Ալեքսանդրի հրամանով ծերունի զորավար Փիլիպոս Պարմենիոնն անցնում և Հելեսպոնտոսի միջով։ Դրանով սկսվում և Պարսկաստանի գեմ մզկող կամպանիան։ Պատերազմը Պարսկաստանի գեմ արդեն բոլորովին նախապատրաստված էր Փիլիպոսի կողմից և միայն նրա մահվան պատճառով չեր սկսվել ավելի վաղ։

Ալեքսանդրն սկսել և իր արշավանքները մտավորապես 40 հազար զորքով, իսկ պարսկական թագավորը հակադրել եր նրան ավելի քան հարյուրհազարանոց մի բանակ։

Սռաջավոր Սքելեքի ամենահարուստ յիրկների խորքն արշավելու հեռանկարը, հարստանալու անսահման հնարավորությունները, — այդ բոլորն Ալեքսանդրի յելույթը դարձրել եր ժողովրդական՝ հունական քաղաքներում։ Հունաստանը քիչ մարտիկներ չի ուղարկել նրա բանակը։ Բայց Ալեքսանդրի գլխավորութերն այսուամենայնիվ կազմում եյին մակեդոնական մարտիկները։

Ծնորհիվ այն հանդամանքի, վոր թագավորի որիհնտացիան ստրկատիրական դեմոկրատիայի ոգտին եր, նույնիսկ Դեմոսթենեսը վերջ տվեց իր հակամակեդոնական յիրույթներին։

Ալեքսանդրը, վորպես բոլոր հույների ռազմական առաջնորդ, եր արշավանքը սարքել եր վորպես տրոյական պատերազմի կրկնություն։ Նրա նավատորմը ափ եր հասել նույն տեղում, վորտեղ, վորպես թե, հնագույն ժամանակում կանգ եյին առել Ազամեմնոնի նավերը։ Տրոյայի բլուրների վրա կատարվում են հանդիսավոր զոհաբերություն։

Այսինչ պարսից թագավոր Դարեհ Յարդ Կողոմանոսի զորքերը կիստրոնացել եյին Ալեքսանդրի ափհանման տեղից վոչ հեռու՝ Հրանիկոս փոքրիկ գետակի մոտ, նրա բարձր ափում։ Պարմենիոնը խորհուրդ է տալիս Ալեքսանդրին սպասել հարմար ժամանակի, ցույց տալով նրա զորքի քանակութեան գերադանցությունը և պարսիկների զիքքի ռազմականությունը։ Բայց Ալեքսանդրը պատասխանում է նրան։ «Միթե ինձ պետք է արգելի մի փոքրիկ գետակ, յեր յես արդեն անցել եմ Հելեսպոնտոսը։ Այդ վայել չե վոչ մակեդոնացիների արժանապատվությանը և վոչ ել այն արհամարհանքին, վոր յես ունեմ վտանգների հանգեց, պարսիկներն եւ յես կարծում եմ, կրարձրացնեն

իրենց գլուխները և կկարծեն, թե կարող են իրենց ուժերը չափել մակեղոնացիների հետ, վորովհետև անմիջապես զաղափար չեն ունենաւ այն մասին, թե ինչից պետք ե վախենան նրանք \*): Դրանով նա մի անգամ ընդ միշտ մշակեց Պարսկաստանի հետ պատերազմելու այն յեղանակը, վորը միակ հնարավորն եր տվյալ պայմաններում, գրոհի ուժեղ թափը և հակառակորդի կենդանի ուժի վոչնչացումը, վոր հնարավոր եր կատարել շնորհիվ մակենդոնական դորքի վորակի գերազանցության: Բացի դրանից, Ալեքսանդրը գիտեր, վոր նրան ուշադրությամբ հետեւում եր ամբողջ Հունաստանը և յուրաքանչյուր հապաղում կամ անհաջողություն հեշտությամբ կարող ելին թիւկունքում ծանր բարդություններ առաջացնել:

Մակեդոնական հեծելազորի բուռն գրոհը պարսկական դիրքերի կենտրոնի վրա յերիտասարդ թագավորի առաջնորդությամբ՝ արագ կերպով վճռում և ճակատամարտը. կենտրոնը ջախջախած եր, չոգնեց նաև հունական վարձկանների ընդդիմադրությունը, վորոնք գտնվում ելին պարսկական ճակատի յերկրորդ շարքում:

Պարսկական դորքն սկսեց խառնիխուռն վախչել իր մի նշանավոր մասով վոչնչացավ և գերի բռնվեց: Գերի հույներին Ալեքսանդրը հայտարարեց հայրենիքի դավաճաններ և ստրուկներ դարձրեց: Բացառություն եր արվել թերեցիների համար. Ալեքսանդրը նրանց ազատ թողեց, ցանկանալով այսպիսով վաշրատել այն ծանր տապալությունը, վոր ստեղծվել եր Հունաստանում Թերեյի կործանումից հետո: Հունաստանի հասցեյին արած այդ ժեսուը նա լրացրեց մի ուրիշ ժեսով. ավար վերցրած պարսկական սպառազինման յերեսուն լավագույն կոմպելկտ Ալեքսանդրն ուղարկեց Աթենք, վորպես նույն՝ քաղաքի հովանավոր աստվածուհուն հետեւյալ մակագրությամբ. «Ալեքսանդրը Փիլիպոսի վորդին և հույները, բացի լակեդեմոնացիներից \*\*), Ասիայի բարբարոսներից»:

\*) Արրիան, «Ալեքսանդրի արշավանքները», գիրք 1, 13-րդ գլուխ:

\*\*) Լակեդեմոնի բնակիչները չեյին մասնակցում Ալեքսանդրի արշավանքին: Նրանց մի մասը նույնիսկ կուտում եր նրա դեմ՝ պարսկական բանակի շարքերում:

334—333 թվի ձմեռը պարսից թագավոր Դարեհ Յ-րդը վճռում է հարված հասցնել Ալեքանդրի բանակին՝ նրա տմենաւխոցելի աեղից: Այդ նպատակով նա փորձում է կազմակերպել ծովային արշավանք Հունաստանի դեմ, ոգտագործելով պարօկական նավատորմի գերազանցությունն եղելան ծովում և հույս գնելով Հունաստանի հակամակեղոնական խմբավորումների վրա: Դրանով իրագործվում եր նաև պարսից ծառայության մեջ զբանվող հունական աշքի ընկնող ուղղմագետ Մեմոնի պլանը, փորձ խորհուրդ եր տալիս Դարեհին հրապուրել Ալեքսանդրին և նրա գորքը՝ Սսիայի խորքը, կարելով նրան ուղղմական բազայից, գրավիլ Հունաստանը և այսպիսով մակեղոնական գորքը զնել անելանելի գրության մեջ: Մեմոնը ճշորեն եր գնահատում մակեղոնական ուժերի վորակական գերազանցությունը և տառչարկում եր մի այնպիսի ուղղմագիտություն, փորձ հիմնված եր բոլոր քաղաքական և ուղղմական մոմենտների զգացած հաշվառման վրա:

Մեմոնն սկսում է իրագործել իր պլանը, նա գրագում է Քիոս կղզին, պաշարում և Միտիւնը Լեռըսոսի վրա, կազմակերպում և ընդդիմագրություն մակեղոնացիների գետ Փոքր Սսիայի ծովափնյա քաղաքներում—Յեփեսոսում, Միլեթում—տմեն տեղ իշխանության կոչելով ոլիգորիներին: Բայց շուտով Ալեքսանդրի այդ վտանգավոր հակառակորդը մհոնում է: Սակայն Եղեյան ծովի գրավման պլանը շարունկում է իրագործվել Մեմոնի հաջորդների կողմից:

Ալեքսանդրին հաջողվում է համեմատաբար հեշտությամբ վերջ տալ այդ վտանգին: Նրա յերկու ծովային հրամանատարները—Խեգելիսոսը և Պրոթեսոսը—աշքի ընկնող յերիտասարդ հրամանատար Կրատերոսի ընդհանուր զեկավարությամբ սկսում են մի շարք ծովային յետնողուն գործողություններ, վորոնց արդյունքը մինում է այն, վոր գումար չափով հունական նավերից բաղկացած պարսկական նավատորմն անցնում է Ալեքսանդրի կողմը: Աթենքի և մասցած Հունաստանի վերաբերմար ցույց տված քաղաքականությունը տալիս է իր արդյունքները: Բայց Դարեհի նավատորմի մնացած և ուժեղագույն մասը, վոր բաղ-

կացած եր փյունիկեցիների նավերից, դեռևս սպառնում եր կտրել  
մակեղոնական գորքը Հունաստանից:

Իր կողմից Ալեքսանդրը Հրանիկոսի մոտ տեղի ունեցած  
ճակատամարտից հետո սկսեց զրավել եղեյան ծովի փոքրասիա-  
կան ափերը, վոր բանված եր միացած հունական աշխարհի հետ  
սերսորին կապված հունական պոլիսների անընդհատ շղթան-  
յով: Այսաեղ մակեղոնական զորքը հաղթեց Մեմոնի կող-  
մից նշանակված և զեկավարվող Միլեթի, Յեփեսոսի և Հալի-  
կարնասի ոլիգարքիներին: Ալեքսանդրի խնդիրը հեշտացնում է յին  
այդ քաղաքների զեմոկրատական խմբավորութերի համակառ-  
թյունը և մակեղոնական բանակի տեխնիկական հրաշալի հագե-  
ցումը: Մակեղոնական բանակը հանդիսանում եր «կլասիկ»  
Հունաստանի սպազմական տեխնիկայի դարպացման նոր աստի-  
ճանն ու հանրագումարը: Հենց այդ և մեկն այն գլխավոր պատ-  
ճառներից, վորոնք պայմանավորում եյին Ալեքսանդրը Մակե-  
ղոնացու բանակի շեշտակի հաջողությունները կովի ժամանակ  
հետեւակ զորքի զործողություններին նախորդում եր «հրետա-  
նու» նախապարագությունը, պատեր քանզող բարդ ու մեծա-  
ծավալ մեքենաներն ավերում եյին քաղաքի պատերը, իսկ ավելի  
բարդ նետող մեքենաները ոժբակուծում եյին քաղաքը քարե-  
ծանը արկերով:

333 Թիֆի գարնան մոտ Փոքր Ասիայի ծովափնյա պոլիսներն  
Ալեքսանդրի իշխանության ներքո եյին և նոս շարժվում ե փոքր  
Ասիայի խորքերը՝ այդ ըջանում իր զործողությունների կենտ-  
րոն քարձնելով Գորդիոնես քաղաքը, վորի մեջ, ըստ ավան-  
դության, տեղի յի ունեցել մի եպիզոդ, վորից սկիզբ ե տաել  
նշանավոր զորդյան հանգույցի առածը: Այսաեղ, բերզի մեջ,  
շատ հնուց կար մի սայակառք, վորի կաշին լժասարքն այնպես  
եր խճնիկը, վոր անհնարին եր ծայրերը գտնել Գոյություն ուներ  
ավանդություն, թե ով վոր կարողանար քանդել այդ հանգույցը,  
նա կդառնար Ասիայի իշխողը: Ալեքսանդրը թրով կտրում ե այդ  
«զորդյան հանգույցը»\*):

Դորդիոնեական Ալեքսանդրն առաջ ե շարժում իր զորքերը  
գեպի Փոքր Ասիայի հարավարելյան ափը, Կիլիկիա, վորի մի-

\* ) Պլուտարքոս, «Ալեքսանդր Մակեղոնացու կենսագրությունը»:

շով ընկած եյին ճանապարհներ դեպի պարսկական պետության յերկու կարևորագույն մարզերը - Յեղիպառու և Միջազնոք: Այդ մարզերից յերկուառումն ել տեղի ուներ խոռովություն պարսկական տիբրապետության դեմ: Դարեհ Յ-րդը ձգտում եր հենց այդտեղ կանգնեցնել Ալեքսանդրի արշավանքը, վորովհետև Կիլիկիայի ծովափին շատ մոտիկ եյին գտնվում վյունիկիական Սիրոն և Տիրոս քաղաքները, վորոնք պարսկական նաև վատորմի հիմնական բազաներն եյին կազմում: Այստեղ, Փոքր Ասիայի ափի հարավ-արևմելյան անկյունում, իսաա ավանի մոտ տեղի ունեցավ յերկրորդ ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների մեջ: Ալեքսանդրը կրկն կիրառեց հեծելադրի շեշտակի գրոհի տակտիկան պարսկական զիրքերի կենտրոնի վրա, վորը հնարավորություն տվից նրան լուսին ոգտագործելու մակեդոնական հեծելազորի բարոյական և տեխնիկական առավելությունները, և Դարեհը նորից փափավ, այս անգամ այնքան գլուխը կորցրած, վոր հաղթողի ձեռքում թողեց իր կնոջը՝ «Արեւելքի ամենազեղեցիկ կնոջը», մորը, քույրերին և աղջիկներին: Ալեքսանդրը ցույց տվեց նրանց վերաբերմամբ բարեկամական ուշադրություն և ապահովեց նրանց կատարյալ անվտանգությունը, շեշտելով գրանով, վոր ինքը նպատակ չունի լինելու Պարսկաստանի և նրա սոցիալական-քաղաքական կենցաղի նվաճող-կործանողը, այլ՝ պարսիկ թագավորների որինական ժառանգը:

Այդ միենույն դիտավորությունն ե արտահայտում նա վակատար պարզությամբ Դարեհ Յ-րդի հետ ունեցած իր գրագրության մեջ, վոր սկսվել եր իսսայի մոտ կատարված ճակատամարտից հետո: Դարեհը նամակում ինդրել եր Ալեքսանդրից վորպես «արքայից արքաի» վերադարձնել իրեն կնոջը և ընտանիքը և վերջ տալ ուղամական գործողություններին, վորոնք իր (Դարեհի) կողմից չեն յեղել սկսված: Ալեքսանդրը պատասխանում ե նրան մեղադրելով այն բանի մեջ, վոր Պարսկաստանն անընդհատ փորձեր և կատարում խլերու Հունաստանը, պաշտպանում և հակամակերուսական շարժումը և վերջացնում և նամակն այս խոսքերով: «Այժմ յևս ամբողջ Ասիայի տերն եմ և պատում եմ քո այցելության... Յեթե դու կդաս ինձ մոտ, այն

ժամանակ ինպրիք և' մորդ մասին, և' կնոջդ մասին, և' զավակւ ներիդ մասին,—ինչի մասին ցանկանում ես, ամեն ինչ կտանաս... ուղարկելով ինձ մոտ, դու հիշեր, վոր ուղարկում ես Ասիայի թագավորի մոտ և չհամարձակիլես քեզ ինձ հավասար համարելը\*)

#### 4.

Սակայն Պարսկաստանը նվաճելու համար Ալեքսանդրին նախապես անհրաժեշտ եր հաստատապես ամրացնել իր դրությունը Հունաստանում, իսկ հետեապես նաև Միջերկրական ծովի վրա: Անհրաժեշտ եր յինթարկել իր լիակատար կոնտրոլին փյունիկական քաղաքները, վորտեղ կենտրոնացած եր առևմտրի նշանավոր մասը Միջերկրական ծովի արևելյան մասում և վորոնք այսպիսով հանդիսանում ելին հունական առևտրականների մըրացակիցներ, վորոնց պաշտպանում եր Ալեքսանդրը: Արրիխանն այսպես և հազորդում Ալեքսանդրի ճառը, վոր նա ասել և Տիրոսը պաշարելուց առաջ. «Զինակից բարեկամներ և ընկերներ: Մենք չենք կարող վստահությամբ արշավել Յեգիպտոսի վրա, քանի դեռ պարսիկները ծովի տերերն են... Յեթե մենք առնենք Տիրոսը, այն ժամանակ կդառնանք Փյունիկեցի տերը և փյունիկական նավատորմը, վոր պարսկական ծովային ուժերի ամենամեծ և լավագույն մասն և կազմում, մերը կինի»: Այս պատճառով ել Ալեքսանդրի ուղին վոչ թե ուղղակի Բարեկաստան եր ուղղված՝ Առաջավոր Ասիայի այդ գանձատունն ու շոեմարանը և հունական նվաճողների յերազանքների առարկան, այլ Միջերկրական ծովի արևելյան ափով դեպի հարավ:

Ամբողջ 332 թիվը անցավ փյունիկական քաղաքները նվաճելով. ինն ամիս տեսեց անառիկ Տիրոսի փյունիկական այդ կարևորագույն կենտրոնի պաշարումը, վորը գտնվում եր մի փոքրիկ ժայռոտ կղզյակի վրա, մոտավորապես մի կիլոմետր հեռու ծովի ափից: Տիրոսի պաշարումը հնարավոր եր միմիայն հույն-մակեդոնական նավատօրմի կատարյալ յերակշռման և մեծագույն կառուցումներով պաշարելու գեպօւմք: Արրիխանը, Կիլինտուր, Կուրցիսուր, Դիոդորոսը և Պլուտարքոսը,—մեր գլխավոր սկզբնազբյուրները,

\*) Արրիխան, «Ալեքսանդրի արշավանքները», գիրք 2-րդ, գլ. 14-րդ:

վորոնք պատմում են մակեդոնական նվաճումների պատմության  
մտսին,—պատմում են միաժամանակ Ալեքսանդր Մակեդոնացու  
պաշարման հսկայական կառուցումների մասին։ Մակեդոնական  
բանակի ինժեներները շինել ենին հսկայական ամբարտակ ծու-  
վափի և Տիրոսի մեջ։ Այդ ամբարտակի վրայով գլորելով տանում  
ենին պաշարողական աշտարակներ, վորոնց բոլոր հարկերում կա-  
յին պատերն ավերող և ծանր հրետագնդեր նետող մեքեն-  
աններ։ Պաշարվածները պատասխանում ենին այրելով փայտյա-  
մեքենանները և աշտարակները, բայց վերջի վերջո պատերը կոր-  
ծանվեցին, և Տիրոսը յենթարկվեց կատարյալ վոչնչացման։ Նրա  
բնակչությունը կամ վոչնչացվեց, կամ ծախվեց գերության, կամ  
տեղափոխվեց ուրիշ տեղիր։ Հին Տիրոսը կամ ավելի ճիշտ՝ նրա  
պատերն ստացան նոր բնակիչներ՝ հանձինս հունական կոլոնիատ-  
ների։ Այսպիսով Հունաստանն սկսեց ստանալ փոխհատուցում իր  
ոգնության փոխարեն, վոր նա ցույց եր տվել մակեդոնացի  
նվաճողին։

Կատապի գիմազրություն ցույց տվեց Ալեքսանդրին նաև  
հարավում ընկած փյունիկական Գաղա քաղաքը, վորը վերցվեց  
և կործանվեց յերեք ամսվա պաշարումից հետո։ Քիչ հետո Ալեք-  
սանդրը հրամայում է վերաշնել նախիլին Գաղան, բայց այդ  
խելապին նոր քաղաք եր՝ դարձյալ հույն կոլոնիատներով բնա-  
կեցրած։

Դրավելով Միջերկրական ծովի արևելյան, վիյոնիկյան ափը,  
Ալեքսանդրն պահանց ընդգիրմազրության նվաճում և նաև Յեգիպշ-  
տոսը։ Տեղական բնակչությունը—ինչպես ժողովրդական լայն  
մասաները, նույնպես և իշխող շրջանները—վողջունեցին մա-  
կեդոնական զորքերի գալուստը ժողովրդական մասսաներն անի-  
ծում ենին պարսիկ իշխանությունների ապօրինի տուրքերը, իսկ  
հասարակության բարձր խավերը փափագում ենին «ազատու-  
թյուն», այսինքն փափագում ենին զավթել իշխանությունն  
իրենց ձեռքը։ Հենց վոր Ալեքսանդրը յերեաց Յեգիպտոսի մայ-  
րաքաղաքում—Միջիասում—նա զոհաբերություններ կատարեց  
Ամռնին և յեղիպտացիների մյուս գլխավոր աստվածներին։  
Դրանով Ալեքսանդրը մի տեսակ հայտարարեց իրեն Յեգիպտոսի  
որինական տեր և ամենից առաջ ապահովեց իրեն իշխող շրջան-  
ների և քրմության պաշտպանությամբ։

Ալեքսանդրը, սակայն, այդ կրօնական հոգսերի հետեւց  
 ամենին չեր մոռանում աշխարհիկ գործերը: Նա տեսնում եր,  
 վոր այնպիսի մի հարուստ յերկիր, ինչպիսին Յեղիպառն ե, չունի  
 լավ շինված նավահանգիստ, ինչպես նաև չունի առհասարակ իր  
 հիմնական առևտրական կինտրոնը: Մեծ նշանակություն տարով  
 այդ խնդրին, նա վճռում է ստեղծել այդպիսի կինտրոն: Նա ան-  
 ձամբ ընտրում է ապագա քաղաքի տեղը, անձամբ նշում է նրա  
 սահմանները և հրամայում է յեռանդով տանել շինարարությունը:  
 Շուտով հայտնվում են ուղիղ անկյուններով տրամախաչված փոռ-  
 զոցներ, շինվում են հասարակական և առևտրական շինություն-  
 ներ և այն ժամանակվա տեխնիկայի վերջին խոսքի համաձայն  
 կառուցվում է նավահանգիստը: Այդ քաղաքը, վոր կոչվեց Ալեք-  
 սանդրիա, ստանում է ինքնավարության իրավունք և սկսում է  
 արագործն լցվել զլխավորապես հույն առևտրական-արհետա-  
 վոր բնակչությամբ: Ալեքսանդրիան մինչև այժմ ել գտնվում է  
 իր հին տեղում և հանդիսանում է Միջերկրական ծովում խոշո-  
 րագույն նավահանգիստ: Ալեքսանդրի մահից հետո, նելլենակա-  
 նության դարաշրջանում Ալեքսանդրիան դառնում է համաշխար-  
 հային կինտրոն:

Յեղիպառոն ստանում է նոր, ուժմական-վարչական կազ-  
 մակերպություն, վորը, սակայն, համարյա ձեռք չի տալիս մանր  
 շրջանների հին սիստեմին, վորոնցից կազմված եր ամբողջ յեր-  
 կերը: Յերկը կառավարչության գլուխ եր նշանակված յեղիպ-  
 տացի, սայց նրա հետ միասին կար կինտրոնական վարչության  
 առանձին պետ՝ Ալեքսանդրի մերձավորներից: Կառավարության  
 առանձին ճյուղերի գլուխ ելքին կանգնած հույներ կամ մակե-  
 րոնացիներ:

5.

Հնդկանելով բազմաթիվ գեսպանություններ Հունաստանից  
 և Խաղերով ու գերասանների յելույթներով տոնելով արշավանքի  
 առաջին մասի ավարտը՝ Ալեքսանդրը ՅԵԼ թիվ գարնոսնը (մինչեւ  
 մեր թվականը) առաջ շարժվեց նշանավոր չափով մեծացած զոր-  
 քով գետի Միջագետք: Դարեհը կարողացել եր այդ ժամա-  
 նակ հավաքել իր ժամանակի համար ահազին գորք, վորը յերկու-



Սուզիանից Ալեքսանդրը շարժվում և Դարեհի հետից գեղարի բուն Պարսկաստանի խորքը, Եթրաթոն, պարսից թաղավորների գլխավոր աթուանիստ Պերսկովսի վրայով:

Ճանապարհն անցնում էր Ռեկաբների (այժմյան Խուզիանանի) գեղարտամտաշերի լեռնոտ յերկուով, վորը միայն անվանապես յենթակա յեր պարսից պետքիյանը: Ալեքսանդրն ավերում է նրա լինացին ամրությունները և ստիպում է հպատակների իր իշխանությանը: Պերսկովսիսի առասպելուկան պարագ, վորն իր ճարտարապետության մեջ միացրել էր ասպրաւրարելունական գեղարդվառական աարքերը հանականի հետ, այրում են և ավերակներ գարձնում: Ալեքսանդրի ձևքն են ընկնում ահազին հարսաւթյուններ, միմիայն վոսկի խրված էր մոտավորապես 400 միլիոն սուրբ արծուությամբ՝ վոսկու հաշվով:

Դարեհը ճանկելով մեծամեծ զանձեր, վախչում և Եքրաթանից հյուսվածարեկելը, բայց յերեւյթին դեպի Բակորիա, Սողովիան և Պարթեացց Յերկերը, այն գավառները, վորոնք զանվում են ներկայիս խորհրդացին Միջին Ասիայի աահմաններում, Թուրքմենստանի, Աւգրեկաստանի և Տաջիկստանի հանրապետությունների հողերում: Այսուղ ուղղմանը ցեղերի մեջ, վրանք մոտ ելին պարսիկներին իրենց լիգվով, Դարեհը և նրան ուղեկցող ազնվական Բես և Նարարդան պարսիկները հույս ունեցին կազմակերպել նոր զիմոզրություն Ալեքսանդրի բանակին:

Ալեքսանդրն ուղարկում է Պարմենիոսին՝ հպատակեցնելու Գիրկանիան, իր մանկության բարեկամ Կիտոսին ուղարկում և Պարթեացց Յերկերը, իսկ ինքն շտապում և հալածել Դարեհին: Հարածումը չափազանց լարված էր: Ալեքսանդրն իր զորքի հետ ստիպված էր հաղթահարել շատ մեծ տարածություն:

Դրությունը բարդանում էր նաև նրանով, վոր այդ ժամանակ Դարեհի և նրա ուղեկիցների շուրջը խմբվել ելին պարսկական բանակի լավագույն ուժերը:

Այդ ժամանակ Բեսաը մտածել էր սպանել Դարեհին, վոր պեսզի ինքը, վորակես պարսից թագավոր, տիրե Միջին Ասիային և պատերազմ մղե Ալեքսանդրի գիմ: Ալեքսանդրին այդ բանը հաղորդել ելին բազմաթիվ զինվորներ, վորոնք վախել ելին թշնամու զորքեց, և նա, ցանկանալով ամեն կերպ պարսից թագավորին հաղթող լինել՝ ձգտում էր խանգարել այդ սպանու-

թյունը: Կատաղի կերպով հարածելով Դարեհին՝ Ալեքսանդրը հայտնվում է Միջին Ասիայի սահմանների մոտ: Այսուեղ Ալեքսանդրը գտնում է Դարեհի տակավին չսառած զիակը և ծածկում է այն իր ծիրանի պատմումանով, շեշտելով դրանով, վոր հաղթված պարսից թագավորի մարմինը պետք է նվիրական լինի իր հպատակների համար:

### 6.

Այդ մոմենտից սկսվում էն մակեղոնական գորքերի մի շարք ծանր արշավանքներն Ալեքսանդրի գլխավորությամբ Միջին Ասիայում և Հնդկաստանին հարող յերկրներում: Այդ արշավանքները, վոր տեսեցին ավելի քան յերեք տարի (330—326 թ.թ.մ.) թվականից առաջ), նպատակ ունեցին վոչ միայն սաղմականութեն զավթելու յերկիրը, այլև հիմնավորապես տիրելու նրան: Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակի Միջին Ասիան ավելի քիչ չափով եր անապատների յերկիր, քան ավելի ուշ ժամանակներում: Արայան ծովի մակարդակը 60 մետր տվելի բարձր եր աժմյան մակարդակից և նրանից մինչև կասպից ծովն անցնում եր այդ ծովերը միացնող մի ջրանցք: Շատ տեղերում արոտավայրերով հարուստ տափաստանային տարածությունները հասնում ենին այսուղի, վորտեղ հետագայում կազմվել ենին մեռյալ ավազուտներ:

Դիրկանիայում՝ Միջին Ասիայի շեմքին, Ալեքսանդրը և նրա զինակիցներն ստիպված ենին հաղթահարել մի շարք սաղմասեր լինական ժողովուրդների—մարդերի, թափուրների և այլն համառ դիմադրությունը, վորոնց մոտ թագնվել ենին Դարեհի բանակի մնացորդները: Սակայն այսուղի Ալեքսանդրն ընդհարվեց անբավարանության առաջին նշանների հետ իր զորքերի մեջ, վորոնց մի մասը չել ցանկանում առաջ շարժվել Ալեքսանդրն ազգեց իր մարդկանց վրա յերկու միջոցով. մի կողմից՝ նա բաշխեց մարտիկներին առատ նվերներ, մյուս կողմից՝ ջոկեց անհուսալի տարրերին և ուղարկեց նրանց հայրենիք\*):

Ալեքսանդր Մակեդոնացու Միջին Ասիա մտնելու ժամանակից մակեդոնական զորքի մեջ տեղի ունեցան իրադարձություն-

\* Դիսլորոս, համ. 17-րդ, գլ. 74-րդ:

ներ, վորոնք լրջորեն սպասնում եյին նրա զրությանը։ Պարզ-  
վեց, վոր կա հուզմունք Ալեքսանդրին ամենից ավելի մոտիկ  
հրամանատարների շրջանում, վորոնք հայտնի չափով արտացոլում  
եյին մակեղոնական մարտիկների տրամադրությունը։ Հուզ-  
մունքն առաջ եր յեկել Ալեքսանդրի գործելակերպից, նրա ձըգ-  
տութից՝ մոտեցնել իրեն պարսկական ազնվականությունը՝ նշա-  
նակել պատաժանատու պաշտաններում պարսիկներին։ Ալեք-  
սանդրը չափազանց կարուկ կերպով արձագանքեց այդ անբա-  
վականությանը Եեր նա զեաւ գտնվում եր Դրանգիանոսում և  
Արախողիայում, նրան ցույց են տալիս եր յերիտասարդ և  
ամենամու հրամանատարներից մեկին—Պարմենիոնի վորդի Փի-  
լրտուին։ Մի կարծ քննությունից հետո Ալեքսանդրը խորհրդի յե  
հավաքում իր գվարդիայի հրամանատարներին և Փիլրտուին  
զատապարտում են մահվան պատճի։ Ալեքսանդրի գաղտնի հրա-  
մանով Միկիայում (Մարաստան) սպանվում է նաև Պարմե-  
նիոնը, վոր խոշորագույն մակեղոնական զորավար եր և Ալեք-  
սանդրի հոր մոտիկ բարեկամը։ Ծերտնի հրամանատարի սպա-  
նությունը տրատնջ առաջացրեց հասակավոր մարտիկների մեջ,  
վորոնք մակեղոնական դորքի հիմքն եյին կազմում։ Ալեքսանդրը  
գործում եր ծայր տատիճան վճռականությամբ և յեռանդով։ Ոկ-  
սուս (Ամու-Դարյա) գետն անցնելուց առաջ նա վոնդոց բանա-  
կից մի շարք փորձված հին մարտիկների և ուղարկեց նրանց  
հայրենիք, Ալեքսանդրի լարված զրության և ջղայնության մա-  
սին այդ շրջանում վկայում ե մի փողերդական դեպք, վորը  
տեղի ունեցավ ավելի ուշ (328 թ.) Մարաքանդում։ յերեկոյան  
իրախճանքի ժամանակ նա սեփական ձեռքով սպանում է իր  
մահկության բարեկամ և մերձավոր Կիլտոսին, վորը մի քանի  
անգամ փրկել եր նրա կյանքը, և այդ միտիայն այն պատճառով,  
վոր Կիլտոսը կտրուկ կերպով կշտամբում եր թագավորի գործե-  
լու յեղանակը։ Սակայն, ինչպես պատմում են հին պատմագիր-  
ները, այդ սպանությունից հետո Ալեքսանդրն ամբողջ ժամանակ  
տանջվում եր զղջալուց,

Կարգ սահմանելով իր դորքերի մեջ Ալեքսանդրը շարժվում  
ե դեպի հարավարեկելք, արիական ժողովրդի մարզը, վորի կու-  
սակալ Սատիքարզանն անձնատուր և լինում նրա մարզի գլխա-  
վոր կենտրոնում՝ Արտակուանում։

Շուշտով ալեքսանդրը լուր և ստոհնում, վոր Բեսով Բակարիայում հայտարարել և իրեն Արտաշես թագավոր և մեծ զարք և կազմակերպում: Ալեքսանդրն անհավաղ շարժվում և զեզի հյուսիս՝ Բակտրիայում՝ 330 թվի վերջին ամիսներն Ալեքսանդրն անց և կացնում Բակտրիայում՝ տպատամբությունների գլուխավանքներ վարելով և միաժամանակ զբաղվում և այդ յերկրից հարավընկած՝ իր պրզեն նվաճած մարզերը կարգի գցելով: Այդ նպատակով նա հիմնում է մի քանի նոր քաղաքներ, վորոնք հետագայում խոչը զեր են խաղացել Միջին Ասիայի պատմության մեջ: Դրանցից մենք հիշենք արիական Ալեքսանդրիան կոմայժմյան Հերաթը և Արախոզիական Ալեքսանդրիան կոմ Դանդանարը (այժմյան Աղվանստանում): Համարելով Հինդուկուշի մոռնաշղթան Կովկասի շարունակությունը՝ Ալեքսանդրը հիմնում և ուղիղ Հարկաստանի սահմանի մոտ, Ավրամոստանի ամեմյան մայրաքաղաքի՝ Քարուլի տեղը Ալեքսանդրիա քաղաքը Կովկասում:

Կատաղի կռվից հետո Ալեքսանդրին, հաջողվում և ջարդել պարսկական զորքերի մնացորդներին, վորոնք կռվում ելին Բեսով հրամանատարությամբ և գրափել ամբողջ Բակտրիան:

Զախախված Բեսոն անցնում և Ոկտոս գետը և փախչում դեպի Յակսարտ (այժմյան Սիր-Դարյան) գետի ուղղությամբ, վորտեղ նա հույս ուներ թագնվել հարսծանքից բազմտթիվ ուղղակեր թափառակցաց ցեղերի մոտ, վորոնց Ալեքսանդրը և նրա հետ նաև հնագույն պատմագիրներն ու աշխարհագիրները սխալմամբ անվանում են սկզբացիցներ:

Ալեքսանդրն իր զորքերով անցնում և Ոկտոս գետի վրայից այժմյան Քելֆիի մոտ, ըստ վորում նավակներ և շինանյութեր չինելու պատճառով այլ խոր և ջրառատ գետն անցնելու միջոց են ծառայում ողով լցրած կաշվե տկնորները:

Հաջողությամբ անցնելով գետը՝ Ալեքսանդրը շարժվում և դեպի հյուսիս, յերկրի գլխավոր կենտրոնը—Մարաքանդը (այժմյան Սամարգանդը): Ճանապարհին գալիս են նրա մոտ Բեսով զինակից Սպիտամենի կողմից գեսպաններ և առաջարկում են մատնել Բեսոն: Ալեքսանդրն ուղարկում և առաջ իր մերձավոր հրամանատարներից մեկին՝ Պտղոմեոսին, զորին իսկապես հաջողվում և բանել Բեսոն: Ալեքսանդրը պատմում են նրան վորպես խոռվարի, պարսկական թագավորների սովորության համաձայն

կտրում են նրա քիթն ու ականջները և ուղարկում են նրան  
Բակարիա, վորաեղ քիչ հետո պարսկական գահի այդ անբախտ  
թեկնածուն սպանվում է:

Վերջացնելով իր հաշիվները Բևսի հետ Ալեքսանդրը մըտ-  
նում և Մարաքանդ և Թողնելով նրա ամրոցում կայտոր, լայն  
հովառվ անցնում և առաջ զիպի արևելք, Յակսարտ գետը,  
վարի ձախ ափին ընկած եյին խիտ բնակեցրած և հարուստ հո-  
գեր: Այստեղ կային բաղմաթիվ քաղաքներ, վորոնց մեջ կային  
բավականին խոշորները: Յակսարտի աջ ափին ապրում եյին  
մասնագետների ուղմասեր թափառակյաց ցեղերը, վորոնց ասպա-  
տակություններից ցանկանում եր ապահովել իրեն Ալեքսանդրը:

Հենց վոր մակեդոնական զորքը տեղավորվում է կայտոր-  
ներով Սոգդիանի քաղաքներում, ամբողջ յերկրում բռնկում և  
ապստամբություն, վորը, հավանորեն, նախապատրաստել եր  
Սպիտամենը, վորովհետեւ այդ մոմենտում նա մեծ ուժերով հար-  
ձակվում է Մարաքանդի վրա և վոչչացնում և այնտեղի մակե-  
դոնական կայտորը: Ստեղծվել եր չափազանց վաճանգավոր  
գրություն: Բայց մակեդոնական բանակի հրաշալի կազմակեր-  
պությունը և տեխնիկական գերազանցությունը կատարում են  
իրենց գործը: Ալեքսանդրը հանգուգն յեռանդով վարում է իս-  
կական պաշտպանական պատերազմ՝ ապստամբած քաղաքների դեմ:  
Յերկու որվա մեջ նա վերցնում է ինք մանր քաղաքներ: Գլխա-  
վոր քաղաքը—«Կիբրոսի քաղաքը»—պահանջում է մեծ լարվա-  
ծություն պաշտպանությունը կողմից, ըստ վորում գրոններից մեկի  
ժամանակ ինքը՝ Ալեքսանդրը բավական ծանր վիրավորում է:

Ճնշելով արտատրությունը՝ Ալեքսանդրը հրամայում է  
չիմնել քաղաք իր բանակի տեղում: Բանակատեղին շրջապատում  
են մոտ 11 կիլոմետր յերկարություն ունեցող (60 ստագիա) պա-  
տով, ներսում շինում են աներ, հասարակական և պետական  
շենքեր—այդ ամենը 17—20 որվա ընթացքում: Նորաշն քաղա-  
քում բնակեցնում են զինվորական կորոնիստներին, զիմավորա-  
պիս հույներին: Այդ քաղաքն ստացավ «Ալեքսանդրիա Եսխա-  
տի» անունը, վոր ճնշանակում է «Ծայրային Ալեքսանդրիա»—  
ամերին Խոջինար (վորը ներկայումս վերակոչված է Անինար-  
պադ) և զանգում է Յերգանյան հովակ մուտքի մոտ:

328—327 թվի ձմեռն անցավ մեծ կազմակերպչական աշխատանքի մեջ՝ Պարսկաստանը կառավարելու վերաբերմամբ, զորքերի տեղափոխության և կոմպլեկտացման մեջ։ Մակեդոնիայից և Հունաստանից նոր զորքեր ելին դալիս։

Այդ ձմեռը նշանավոր գարձավ այն տրագիկական ընդհարումով, զոր տեղի ունեցավ հելլենական ստրկատիրական զեմուկատիայի և արևելյան թագավորների բռնապետական իշխանության մեջ, զորոնց ներկայացուցիչն ավելի հատու կերպով դառնում եր Ալեքսանդրը։ Ալեքսանդրի ընդունելությունների ժամանակ սովորություն մացվեց ընկնել յերեսի վրա և չոքեչոք սողալ նրա առաջ, զորով արտահայտվում եր նրա աստվածացումը։ Այդ սովորությունը չկատարող պարսիկներին սաստիկ պատժում ելին, մինչդեռ այդ կարգը չպահպանող մակեդոնացիների և հույնների արարքին նայում ելին «մատաների արանքով»։ Ալեքսանդրին ուղեկցող հայտնի հունական պատմագիր և փելիստիքա Կալիխթենեսը, զոր նրան մատիկ մարդ եր, սկսեց գատապարտել թագավորի բռնակալական հակումները։ Կալիխթենեսը թագավորի հրամանով շղթայակալ և արվում ե, ինչպես առում ելին, գաղտնի սպանվում ե։

Ամառը համեմելու հետմեիսին արշավանքներ կազմակերպվեցին տիրելու համար զիմադրության վերջին պատվարներին։ Սողոկիանում։ Գլխավոր ամրություններից մեկն եր մանր իշխան Ոքսիարդի աթոռանիստը, զորը գանվում եր անառիկ ժայռի վրա։ Անձնատուր լինելու պահանջին Ոքսիարդը ծաղրով պատասխանում ե, «Թող Ալեքսանդրն առաջ թեավոր ծիեր ձեռք բերե»։

Սակայն Աթոռանիստ քաղաքը շուտով առնվում ե։ Ալեքսանդրի ձեռքը գերի յի ընկնում Ոքսիարդի աղջիկը, հոչակավոր «արեկելքի վարդը»՝ Ռոքսանան, զորի հետ Ալեքսանդրը շուտով ամուսնում ե։ Այդ փաստը մեծ տարավորություն ե գործում միջինասիական ժողովուրդների տոհմիկ ավագանու ներկայացուցիչների վրա, զորոնք մատածում ելին, զոր այդ ամուսնությամբ մակեդոնական թագավորը մտել է իրենց շարքերը։ Ալեքսանդրի կողմից այդ ամուսնությունը, անկառած, մտածված դիվանագիտական մի խաղ եր, զորի շնորհիվ նու նշանավոր չափով ապա-

Հովում եր իր համար առնմիկ ավագանու ոգնությունը, զոր առանձնապես հարկավոր եր նրան Հնդկաստանի համար նախապատրաստվող արշավանքի մեջ: Նրա անսովոր շքեղ ամուսնությունը Ծոքասանալի հետ քաղաքական մի ցույց եր:

Հնդկաստանի արշավանքն զգալի չափով նախորոշված եր այն առևտրական և քաղաքական սերտ կապերով, վորոնք գոյություն ունեցին հարավից Միջին Ասիային հարող լեռնային յերկրների և Հնդկաստանի մեջ: Այդ արշավանքը հեշտանում եր շնորհիվ հնդկական առանձին ցեղերի առաջնորդների և ժողովուրդների իրար գեմ ունեցած կատաղի կովի: Այսպես, որինակ, այժմյան Ավղանստանի յերկիրը գրավելու ժամանակ Ալեքսանդրը հանդիպում է հնդկական մանր իշխան Սիսիկոտախն, վորը մտում և Ալեքսանդրի մոտ և տեղեկություններ և հաղորդում նրան այդ վեճերի մասին: Մի ուրիշ հնդկական ռաջա, Տաքսիլլ, գիտում և նրան և ոգնություն խնդրում այն կովի մեջ, վոր նա ուներ Փենջարի Փոր թագավորի հետ: Իսկ Հնդկաստանի առասպելական հարստությունների լուրը սասակիկ հրապուրում եր հույնակերպունական զորքին և հրում եր նրան պատերազմելու:

326 Թվի գարնանն Ալեքսանդրը թողնելով բավականաչափ ուժեր Միջին Ասիայում, յերկրորդ անգամ անցնում և Պարապնիսադը (Հինդուկուշը) և հայտնվում և Խնդրափ հովտում, վորատեղ նրան դիմավորում և Տաքսիլլ: Ալեքսանդրը թողնում և իր կայագործ ռաջայի մայրաքաղաքում, իսկ ինքն անցնում և Խողոսի ձախ ափը և Գիգասապի ափերում լիովին հաղթում և Փոր թագավորին և գերի առնում նրան:

Այդ հաղթությունից հետո Ալեքսանդրն սկսում է ամրանալ Փենջարում և այնտեղ հիմնում և յերկու քաղաք—Նիսիա և Բուցեֆալ (այժմյան Ջալալպուրը) գաղութները. վերջին գաղութի անունը արփում և ի պատիվ պատերազմում սպանված՝ Ալեքսանդրի սիրելի ռազմական Բուցեփալ ձիւ: Այստեղից Ալեքսանդրը շարժվում և Խնդրուի ձախ վտակներով զեպի արկելք, պատերազմներով տիրում և ամրացրած կենտրոններին, հպատակեցնելով իրեն մի շարք ցեղեր: Նա հույս ուներ հասնել մինչև Գանգես գետը և նրա ուղղությամբ՝ մինչև Ովկիանոս, վորը նրա տեսակետից Ասիայի ծայրագույն սահմանն եր: Բայց նրան չհաջողվեց իրագործել այդ պահնը, վորովհետեւ զորքերը հրաժարվեցին

արշավանքի յելնելու։ Հույն-մակեդոնական զինվորների վաղուց ամբարված դժոխությունը դուրս պտութիւց։ Զնայելով Ալեքսանդրի հորդագորներին, զորքը չեր ցանկանում առաջ շարժվել և նույնիսկ այսպիսի հրամանատարներ, ինչպես Յենն եր, Խորհուրդ ելին տալիս թագավորին վերապառնաբ։ Ալեքսանդրը հայտարարում է վերագառնալու մասին։ Վերագարձն Ալեքսանդրի դժվարագույն արշավանքներից մեկն եր, վորի ընթացքում զորքի մի մասը լողում եր գետերով, իսկ մյուս մասը զնում եր ցամքային ճանապարհով՝ Երիթրեյական ծովի ափով գեղի Պարսկաստան։ Ինդուով լողալու հետ միաժամանակ աեղի ելին ունենում մի շարք կռիվներ և հիմնվում են ամբություններ։

Ամենամեծ աշխատանք յերկիրը տերելու և ամբացնելու մեջ կատարվում և Ինդուսի գելտայում։ Այսաեղ շինվում և սաստիկ ամբացնում են Պատասի հին կենարոնը, վորանեղ կառուցում են նավահանգիստ, նավաշինարաններ, դինանոց։ Քաղաքը գարձնում են ուղմակեան և առևտրական բողոք։ Իր ծովագետ Նեարքոսին Ալեքսանդրը հանձնարարում և նավատորմը տանել ովկիանոսով Պարսկաց ծովածոցը և պարզել անմիջական ծովային հարաբերությունների հնարավորությունը Միջագետքի և Հնդկաստանի մեջ։ Ինքը՝ Ալեքսանդրը սուկալի զրկանքների սրայմաններում տանում է զորքը Հեղորդիայի (այժմյան Բելուջիստանը) միջով և ապա ովկիանոսի ափով զեղիւ-Միջագետք։

Ալեքսանդրը և նրա ծովագետ Նեարքոսը կատարում են իրենց խարիսը և հաջողությումը հասնում են իրենց նպատակին վերագառնալով Հնդկաստանից Բարեկաստան՝ Ալեքսանդրը յեանանդով զբագվում և պիտությունը կրառավարելու դործով։

Դիմատում և պարզեատարում և փոխարքաներին, կազմում և արշավանքների հանրագումարը, հայտարարում և զորքին, վորինը կիմարի արշավանքին մասնակցողների լուրի փոխարեն։ Այսպիսով ծախսվում է 20 հազար տաղանդ (մոտ 30 միլիոն ոռորի)։ Շուտով Ալեքսանդրը նորից «զտում» և կատարում իր բանակի շարքերում, ընտրում և մոտ 10 հազար հույներ և մակեդոնացիներ, վորոնց հրամայում և ճանապարհվել հայրենիք։ Դրա հետ միաժամանակ նա կարգադրում է հավաքագրել Պարսկաստանում 30 հազար յերիտասարդ աղերք, մացնել բանակի

կազմի մեջ վարժեցնելու համար և անվանում և նրանց «եպիսկոպոններ», այսինքն՝ «հետնորդներ»:

Այդ կարգադրություններն առաջացնում են համարյա բացարձակ խոռվություն ամբողջ մակեդոնական զորքի մեջ: Տիգրիսի ափին գտնվող Ոփիս քաղաքում զորքերի բոլոր մակեդոնական մտսերը հայտարարում են, վոր չեն ցանկանում հնագանգվել պարսիկներին և նույնպես գնում են հայրենիք: Ալեքսանդրին արտասահնում և տաք ճառ, վորի մեջ հայտարարում եւ, վոր նրանք կարող են հեռանալ և ձգել իրենց դրավարին ոտար ժողովրդի մեջ և վոր այսուհետեւ նա պարսիկների հրամանատարն եւ լինելու: Բայց մակեդոնական զինվորները խորհեցին և չցանկացան հրամարվել իրենց հրամանատարից, վորն այնքան հաջողություններ և նյութական բարեքներ և ավել նրանց: Կայանում և հաշոռություն, վորը առնվում և փառահեղ խնձույքով և խաղերով: 10 հազար վետերաններ շարժվում են գեղի Մակեդոնիա և Հունաստան՝ Կրատերոսի հրամանատարության ներքո, ծանրաբեռնված մեծ ավարով, իսկ այստեղից Ալեքսանդրի տեղակալ Անտիպատրոսն ստիպված եր թարմ ուժեր ուղարկելու:

Ցանկանարով ստեղծել խառը մակեդոնական-պարսկական աղյօնականություն, Ալեքսանդրը սարքում և մի շարք ամուսնություններ մակեդոնական բանակի հրամանատարների և աղյօնականություն պարսկուհիների մեջ: Խնքը՝ թագավորը և նրա ամենամոտիկ բարեկամ Գեթեստիոնեան ամուսնություն են Պարեհ Յ-րդի յերկու տղյիկների հետ, մյուսները՝ իշխանուհիների կամ աղյօնիկ ծագումն ունեցող կանանց հետ:

Իր կյանքի վերջին ամիսներում Ալեքսանդրը շատ մեծ ուշադրություն է հատկացնում Տիգրիսի և Յեփրատի վրա գետային նավատորմ կաղմակերպելուն՝ մի կողմից և մյուս կողմից ել Պարսից ծովածոցում և Կարմիր ծովում ծովային նավատորմ հիմնելուն: Նա հրավիրում և Բարեկաստան ամենափորձված նավագնացներ Փյունիկյի և Փոքր Ասիայի ափերից և գնում և նրանց իր ծովագետների հրամանատարության ներքո՝ Նեարքոսի զվարակությամբ: Տիգրիսի գետաբերանի մոտ, Պարսից ծովածոցի հյուսիսային ափին շինվում և սարքավորվում եւ Խարակսս քաղաքն ու նավահանգիստը: Ալեքսանդր Մակեդոնացու հանկարծական մահը 323 թվին Բարեկրնում ընդհատում և նրա գործունեյությունը:

արշավանքի յելնելու։ Հույն-մակեդոնական զինվորների վաղուց ամբարված դժգությունը զուրս պոսթկեց։ Զնայելով Ալեքսանդրի հորդորներին, զորքը չեր ցանկանում առաջ շարժվել և նույնիսկ այսպիսի հրամանատարներ, ինչպես Յենն եր, խորհուրդ և յին տալիս թագավորին վերագառնալ։ Այեքսանդրը հայտարարում է վերագառնալու մասին։ Վերադարձն Ալեքսանդրի դժվարագույն արշավանքներից մեկն եր, վորի ընթացքում դորքի մի մասը լողում եր գետերով, իսկ մյուս մասը գնում եր ցամաքային ճանապարհով՝ Երիթրեյական ծովի ափով գետի Պարսկաստան։ Ինգուով լողալու հետ միաժամանակ աեղի ելին ունենում մի շարք կորիներ և հիմնվում են ամբություններ։

Ամենամեծ աշխատանք յերկիրը տերելու և ամրացնելու մեջ կատարվում և ինգուի գելտայում։ Այնուեղ շինվում և սաստիկ ամրացնում են Պատասի հին կենտրոնը, վորտեղ կառուցում են նավահանգիստ, նավաշինտրաններ, դինանոց։ Քաղաքը գարձնում են ուղմական և տանտրական բողա։ Իր ծովագետ Նեարքոսին Ալեքսանդրը հանձնարարում և նավատորմը տանել ովկիանոսով Պարսից ծովածցը և պարզել անմիջական ծովային հարաբերությունների հնարավորությունը Միջագետքի և Հնդկաստանի մեջ։ Ինքը՝ Ալեքսանդրը սովորելի զրկանքների սայցմաններում տանում և զորքը Հեղոսպիայի (այժմյան Յելուշիստանը) միջով և առաջ ովկիանոսի ափով դեպէ-Միջագետք։

Ալեքսանդրը և նրա ծովագետ Նեարքոսը կանարում են իրենց խնդիրը և հաջողությամբ հասնում են իրենց նպատակին։ Վերագառնալով Հնդկաստանից Բարելաստան՝ Ալեքսանդրը յեւանդով զրագվում և պիտությունը կառավարելու գործով։

Գլխատում և պարզեատրում և փոխարքաներին, կազմում և արշավանքների հանրագումարը, հայտարարում և զորքին, վորինքը կվճարի արշավանքին մասնակցողների բոլորի փոխարեն։ Այսպիսով ծախավում է 20 հազար տաղանդ (մոտ 30 միլիոն ոռորի)։ Շուտով Ալեքսանդրը նորից «զառօմն» և կատարում իր բանակի շարքերում, ընտրում և մոտ 10 հազար հույներ և մակեդոնացիներ, դորոնց հրամայում և ճանապարհվել հայրենիք։ Դրա հետ միաժամանակ նա կարգադրում և հավաքագրել Պարսկաստանում 30 հազար յերիտասարդ տղերք, մտցնել բանակի

կազմի մեջ վարժեցնելու համար և անվանում և նրանց «հպի-  
գոններ», այսինքն՝ «հետնորդներ»:

Այդ կարգագրություններն առաջացնում են համարյա բա-  
յարձակ խոռվություն ամրող մակեղոնական զորքի մեջ: Տի-  
գրիսի ամիսն գտնվող Ոփիս քաղաքում զորքերի բոլոր մակեղո-  
նական մասները հայտարարում են, վոր չեն ցանկանում հնա-  
զանդիմ պարսիկներին և նույնպես գնում են հայրենիք: Այժմ  
սանդրն արտասանում և տաք ճառ, վորի մեջ հայտարարում են,  
վոր նրանք կարող են հեռանալ և ձգել իրենց զորավարին ոտար  
ժողովրդի մեջ և վոր այսուհետեւ նա պարսիկների հրամանատարն  
և լինելու: Բայց մակեղոնական զինվորները խորհեցին և չցան-  
կացան հրամարվել իրենց հրամանատարից, վորն այնքան հա-  
ջողություններ և նյութական բարիքներ և ավել նրանց: Կայա-  
նում և հաշոտթյուն, վորը տոնվում և փառահեղ ինձույքով և  
խաղերով: 10 հաղար վետերաններ շարժվում են զեղի Մակե-  
ղոնիա և Հունաստան՝ Կրատերոսի հրամանատարության ներքո,  
ծանրաբեռնված մեծ ավարով, իսկ այստեղից Այթքանդրի տե-  
ղակալ Անտիպատրոսն ստիպված եր թարմ ուժեր ուղարկելու:

Ցանկանալով ստիղծել խառը մակեղոնական-պարսկական  
աղնվականություն, Այթքանդրը սարքում և մի շարք ամուսնու-  
թյուններ ժամանական բանակի հրամանատարների և աղնվա-  
տում պարսկուհիների մեջ: Ինքը՝ թագավորը և նրա ամենամոտիկ  
բարեկամ Գեթեստիոններն ամուսնում են Քարեն Յարդի յերկու  
աղջիկների մետ, մյուսները՝ իշխանուհիների կոմ աղնիվ ծա-  
դումն ունեցազ կանանց հետ:

Իր կյանքի վերջին ամիսներում Այթքանդրը շատ մեծ  
ուշադրություն է հատկացնում Տիգրիսի և Յեփրատի վրա գետային  
նավատորմ կաղմակերպելուն՝ մի կողմից և մյուս կողմից ել Պարսից  
ծովածոցում և Կարմիր ծովում ծովային նավատորմ հիմնելուն:  
Նա հրավիրում և Բարեկաստան ամենափորձված նավակնացներ  
Փյունիկերի և Փոքր Ասիայի ափերից և գնում և նրանց իր  
ծովապետների հրամանատարության ներքո՝ Նեարքոսի զվա-  
վորությամբ: Տիգրիսի գետաբերանի մոտ, Պարսից ծովածոցի  
հյուսիսային ափին շինվում և սարքավորվում և Խարակսիս քա-  
ղաքն ու նավահանգիստը: Այթքանդր Մակեղոնացու հանկար-  
ծական մահը 323 թվին Բարեկաստան ընդհատում և նրա գործու-  
նեյությունը:

\* \* \*

Ալեքսանդր Մակեղոնացու անվան հետ կապված ե անտիկ աշխարհի պատմության մեջ նոր փուլի յերեան գալը։ Սարկա-տիրական հարաբերությունների խոր ճգնաժամը Հունաստանում առաջազրել եր հունական կոլոնիաների մեջ ձգտում՝ դիմելու դեպի Արեելք, պարսից պետության խորքերը։ Հունաստանը և Պարսկաստանը կարծեն սպասում ելին բավականաչափ ուժեղ ցնցման նրա համար, վոր սոցիալական-տնտեսական, քաղաքա-կան և կուլտուրական փոխազդեյության պրոցեսն ավելի արագ թափով ընթանա։ Այս տեսակ ցնցում հանդիսացավ մակեղոնա-կան ռազմական պետությունը, վորի գլուխ կանգնած եր մի անձնավորություն, վորն ուներ հանձարի բոլոր նշանները, վորը հաղորդեց այն ժամանակի պատմական անցքերին իրահատուկ թափ։



[1n.584]

911.6 1 11 20 4.

2

A  $\frac{D}{67312}$